ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«16» 12 2019թ.

ՀՐԱՄԱՆ N 477-Հ

«ՌԱՅԱՆԷՅՐ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Ռայանէյր» ավիաընկերության 2019 թվականի դեկտեմբերի 2-ի հայտը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. «Ռայանէյր» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Հռոմ/LIRA/-Երևան /UDYZ/- Հռոմ/LIRA/ երթուղով՝ 2020 թվականի հունվարի 14-ից մինչև 2020 թվականի մարտի 28-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ, Միլան/LIME/-Երևան/UDYZ/-Միլան/LIME/ երթուղով՝ 2020 թվականի հունվարի 14-ից մինչև 2020 թվականի մարտի 28-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ, Մեմինգեն/EDJA/-Գյումրի/UDZG/-Մեմինգեն/EDJA/ երթուղով՝ 2020 թվականի մարտի 26-ին 1 (մեկ) չվերթ, Բեռլին/EDDB/-Երևան /UDYZ/ - Բեռլին/EDDB/ երթուղով՝ 2020 թվականի մարտի 25-ին 1 (մեկ) չվերթ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ:

2. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվությունների հանձնումն Ընկերությանը:

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

12/16/2019

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926